

Միջազգային ջատագովական դեկլարացիա

(Международная апологетическая декларация)

«Արդ աղաչում եմ ձեզ ես՝ Տիրոջ համար կապուածու, որ այնպէս գնաք ինչպէս որ կ'վայելէ այն կոչումին որի մէջ կանչուեցաք: Ամեն խոնարհութիւնով եւ հեզութիւնով եւ երկայնմտութիւնով, սիրով իրար համբերելով: Չանալով Հոգու միաբանութիւնը պահել խաղաղութեան կապովը: Մէկ մարմին եւ մէկ հոգի. ինչպէս կոչուեցաք էլ ձեր կոչումի մէկ յոյսի մէջ: Մէկ Տէր, մէկ հաւատք, մէկ մկրտութիւն. Մէկ Աստուած եւ ամենքի Հայր, որ ամենքի վերայ եւ ամենքի հետ՝ եւ ձեր ամենքի մէջ է»:

Եփեսացիս 4. 1-6

Ներածություն

Ավետարանական եկեղեցիները և մեսիական համայնքներն արդեն երկար ժամանակ է, ինչ անընդհատ ենթարկվում են տարբեր կեղծ ուսմունքների ազդեցությանն ու ներխուժմանը, որոնք հավատացյալներին շեղում են աստվածաշնչյան ուսմունքից և խախտում են նրանց հարաբերություններն Աստծո հետ (Ա Յովհաննէս 2. 22-23; 4. 1-4): Կեղծ ուսմունքների հետևում կանգնած են «մոլորեցնող հոգիները», որոնք քարոզում են «ուրիշ Հիսուսի» և «ուրիշ աւետարան» (Ա Տիմոթէոս 4. 1, Գաղատացիս 1. 6-12, Բ Կորնթացիս 11. 1-4): Աստծո Խոսքը մեզ զգուշացնում է. «Չգոյշ կացե՛ք մի գուցէ մէկը յափշտակէ ձեզ փիլիսոփայութիւնով եւ դատարկ խաբեբայութիւնով, մարդկանց աւանդութեան պէս, աշխարհքի սկզբունքների պէս եւ ոչ թէ Քրիստոսի պէս» (Կողոսացիս 2. 8): Ավետարանի թագավորության աստվածաշնչյան քարոզչությունը կենտրոնացված է Արքա Հիսուս Քրիստոսի վրա (Յեշուա հա Մաշիահ): «Մենք էլ քարոզում ենք խաչեալ Քրիստոսը, Հրէաներին գայթակղութիւն եւ Յոյներին յիմարութիւն: Բայց այն կանչուած Հրէաներին եւ Յոյներին, Քրիստոսը քարոզում ենք Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն» (Ա Կորնթացիս 1. 23-24): Աստված Իր Խոսքում կանչում է մեզ ջանասիրաբար մրցել «սրբերին միանգամ աւանդուած հաւատքովը» (Յուդա 1. 3), ինչպէս նաև ճշգրիտ ներկայացնել «ճշմարտութեան խօսքն» (Բ Տիմոթէոս 2. 15): Ստեղծված իրավիճակից ելնելով՝ տարբեր համայնքների ծառայողներին Տէրը քաջալերել է ստեղծելու Միջազգային ջատագովական դեկլարացիա: Այդ փաստաթղթի անհրաժեշտությունը շատ մեծ է: Ապոլոգետիկա (ջատագովություն) – դա աստվածաշնչյան հավատքի պաշտպանությունն է (Ա Պետրոս 3. 15): Սույն դեկլարացիան չի հետապնդում Եկեղեցու կամ մեսիական շարժման հետ մրցակցելու նպատակ (Բ Կորնթացիս 2. 17, 13. 8, Գաղատացիս 4. 16): Ընդհակառակը, մենք հավատում ենք և հուսով ենք, որ դեկլարացիան և մշակված ռեսուրսները աստվածաբանության և ապոլոգետիկայի բնագավառում հավատացյալներին կօգնեն գտնելու իրենց անհանգստացնող հարցերի պատասխանները, որպէսզի մենք կարողանանք «մէկ շունչով» պատերազմել «աւետարանի հաւատքի համար» (Փիլիպեցիս 1. 27):

Սույն դեկլարացիայի նպատակներն են՝

1. Նշել աստվածաշնչյան հավատքի հիմնական սկզբունքները
2. Ընդգծել ժամանակակից ավետարանական և մեսիական շրջաններում հաճախակի հանդիպող աստվածաբանական և գործնական մոլորությունները
3. Աստվածաշնչյան ուսմունքի հիման վրա աջակցել հավատացյալների միջև հոգևոր միասնությանը

Դեկլարացիայի նպատակները՝

I. Նշել աստվածաշնչյան հավատքի հիմնական սկզբունքները.

1. Աստվածաշունչ. Աստվածաշնչի 66 գիրքը հանդիսանում է միակ ճիշտ և հավաստի Աստծո Խոսք (Բ Տիմոթէոս 3. 16-17): Մեր ուսմունքների միակ հիմքը պետք է Աստվածաշունչը լինի: Որոշ վաղեմի և ժամանակակից հրեական և քրիստոնեական տեքստերը, անտարակույս, արժեքավոր

են (հանձինս պատմական իմաստով, ինչպես օրինակ՝ Մակաբայեցիների գրքերը, որոնք «հրեական հնախոսություն» պարականոն գրքերի մասն են հանդիսանում), սակայն միայն Հին և Նոր Կտակարանի (Թանախ և Բրիթ Հաղաշա) գրքերը հավատացյալների համար միակ հեղինակություն ունեցող գրքեր են՝ գրված Աստծո շնչով: Տերը բազմիցս արգելել է պակասեցնել կամ ավելացնել Իր Խոսքը և զգուշացրել է այդպիսի արարքների հետևանքների մասին (Երկրորդ Օրինաց 4. 2, 12. 32, Առակաց 30. 6, Յայտնություն 22. 18-19):

2. Աստծո միությունը. Իսրայելի Տեր Աստված Յահվեն միակ է, Նա Հայրն է, Որդին (Հիսուս Քրիստոսը – Յեշուա հա Մաշիահ) և Սուրբ Հոգին (Ռուահ հա Կոդեշ) (Երկրորդ Օրինաց 4. 35, 6. 4, Մատթեոս 28. 19-20, Բ Կորնթացիս 13. 13): Որդին, Ով հավետ գոյություն է ունեցել, բայց մարմնավորվել է որպես Հիսուս Քրիստոս (Յեշուա հա Մաշիահ)՝ միակ Աստծո երկրորդ էությունն է (Յովհաննես 1. 1-18, Ա Տիմոթեոս 3. 16, Եբրայեցիս 1. 1-3): Հիսուս Քրիստոսը (Յեշուա հա Մաշիահ) և Սուրբ Հոգին (Ռուահ հա Կոդեշ) Իրենց աստվածայնությամբ հավասարազոր են Հոր Աստծուն (Մատթեոս 28. 19-20, Բ Կորնթացիս 13. 13):

3. Հիսուս Քրիստոս (Յեշուա հա Մաշիահ). Հիսուս Քրիստոս անձնավորության մեջ միանում է երկու էություն՝ աստվածային և մարդկային (Յովհաննես 1. 1-18, 10. 30, Կողոսացիս 2. 8-9, Եբրայեցիս 4. 14-15): Տեր Հիսուս Քրիստոսը (Ադոն Յեշուա հա Մաշիահ) իսկական Աստված է և հավիտենական կյանք (Ա Յովհաննես 5. 20, Եբրայեցիս 13. 8-9): Հիսուս Քրիստոսը (Յեշուա հա Մաշիահ) Հայր Աստծո և մարդկանց միջև միակ միջնորդն է (Ա Տիմոթեոս 2. 5-6): Աստվածաշնչով գրված է. «Որ Յիսուսի անունովը կրկնուի ամեն ծունկ երկնաւորների եւ երկրաւորների եւ երկրի տակ լինողների: Եւ ամեն լեզու դաւան է, թէ Յիսուս Քրիստոսը Տեր է Հօր Աստուծոյ փառքի համար» (Փիլիպեցիս 2. 10-11): Հիսուս Քրիստոսը (Յեշուա հա Մաշիահ) կատարյալ կյանք է ապրել, Գողգոթայի խաչի վրա մեռել է մեր մեղքերի համար, մեռելներից հարություն է առել (ըստ Աստվածաշնչի երրորդ օրն, ինչպես ասված է Ա Կորնթացիս 15. 1-4), երկինք է համբարձվել և երկրորդ անգամ կգա երկիր արդեն տեսանելի ձևով փառավորված մարմնով (Մատթեոս 24. 29-30, Չաքարիա 12.10, 14. 3-4, Գործք Առաքելոց 1. 6-11, Ա Թեսաղոնիկեցիս 1. 7-10, Յայտնություն 1. 7):

4. Փրկություն. Դարձի գալը (վերից ծնվելը) համարվում է փրկության կարևորագույն մասը, որն իր մեջ պարունակում է ապաշխարություն (տշուվա) և հավատք, որոնք արմատապես փոխում են մարդու մեղավոր կյանքի ապրելակերպն ու հարաբերություններն Աստծո հետ (Բ Մնացորդաց 7. 14, Յովհաննես 3. 1-8, Գործք Առաքելոց 3. 19, Բ Կորնթացիս 5. 17): Մենք (ինչպես հրեաներն, այնպես էլ հեթանոսները) արդարացված և փրկված ենք միայն Քրիստոսի քավող մահի և հարության հավատքով (Եփեսացիս 2. 1-10, Հռովմայեցիս 10. 9-13, Եփեսացիս 2. 14-15), դրա համար էլ Կտակարանը (բեսորա) պետք է քարոզվի առանց բացառության բոլոր ժողովրդին (Մատթեոս 10. 5-6, 15. 24, 28. 19-20, Հռովմայեցիս 1. 16): Հավատացյալի սրտում Աստված բարի գործեր անելու ցանկություն է առաջացնում (Յակոբոս 2. 14-26, Փիլիպեցիս 2. 13, Գաղատացիս 6. 9-10):

5 Իսրայելն ու Եկեղեցին: Աստված ակտիվորեն աշխատում է ինչպես պատմական Իսրայելի (հրեաների), այնպես էլ Եկեղեցու (Հիսուսին (Յեշուա) հավատացող հրեաների և հեթանոսների) հետ: Հրեաները դեռ ընտրված և սիրված են Աստծո կողմից: Վերջին ժամանակներում հրեա ժողովուրդը՝ նայելով խաչված Հիսուս Քրիստոսին (Յեշուա հա Մաշիահ) կզոջա և կընդունի Նրան որպես իրենց Մեսիա (Մաշիահում), կփրկվի և նոր հարաբերությունների մեջ կմտնի Աստծո հետ (Երեմիա 31. 1, Չաքարիա 12. 10, 13. 1, Հռովմայեցիս 11. 11, 12. 26-29): Հիսուս Քրիստոսին (Յեշուա հա Մաշիահ) հավատացող հրեաները (այսօր ճանաչված են ինչպես մեսիական հրեաներ, Յեուդիմ Մեշիիմ) ընդհանրական Եկեղեցու, ինչպես նաև հրեա ժողովրդի մասն են կազմում: Աստվածաշունչն իրենց Իսրայելի «մնացորդ» է կոչում (Հռովմայեցիս 11. 1-5): Ուրիշ ժողովրդից Հիսուս Քրիստոսին (Յեշուա հա Մաշիահ) հավատացողները պատկանում են ընդհանրական Եկեղեցուն և հանդիսանում են Աբրահամի հոգևոր սերունդը և ըստ խոստումի՝ Աստծո խոստումների ժառանգորդները (Գաղատացիս 3. 26-29): Բոլոր հավատացյալները պետք է ձգտեն բացահայտել և դատապարտել հրեաստյացությունը (թշնամբար փոխհարաբերությունն ու մեծարումը հրեաների նկատմամբ), ցեղապաշտությունն ու ցեղային խտրականությունը, ինչպես նաև պետք է աղոթք անել հրեաների փրկության համար և Երուսաղեմում խաղաղության

համար (Հռովմայեցիս 10. 1, Սաղմոս 122. 6), Աստվածաշնչի ուսմունքի հիման վրա հավատացյալների միջև եռանդորեն աջակցելով հոգևոր միասնությանը (Ծննդոց 12. 1-3, Չաքարիա 8. 20-23, Եսթեր 4. 13-14, Յովհաննէս 4. 22, Հռովմայեցիս 9. 1-5, 11. 17-22):

«Բայց ասում են թէ Յիսուս Քրիստոսը թլփատութեան սպասաւոր եղաւ Աստուծոյ ճշմարտութեան համար, որ հայրերի խոստումները հաստատէ: Բայց հեթանոսները ողորմութեան համար փառաւորում են Աստուծուն, ինչպէս գրուած է թէ Սորա համար կ'գոհանամ քեզանից հեթանոսների մէջ, եւ քո անունին սաղմոս կ'ասեմ: Եւ դարձեալ ասում է. Ուրախացէք, ով հեթանոսներ, նորա ժողովրդի հետ: Եւ դարձեալ՝ Օրհնեցէք Տիրոջը, ամեն հեթանոսներ, եւ գովեցէք նորան, ամեն ժողովուրդներ: Եւ դարձեալ Եսայիան ասում է. Յեսսէի արմատը կ'լինի, եւ նա որ հեթանոսների համար իշխան կ'կանգնի, նորան յոյս կ'դնեն հեթանոսները» (Հռովմայեցիս 15. 8-13):

II. Ընդգծել հետևյալ ժամանակակից ավետարանական և գործնական մոլորությունները.

1. Հին և Նոր Կտակարանի գրքերի (Տանահ և Բրիթ Հադաշա) ճշգրտության և Աստծո շնչով գրվելու փաստի ժխտումը:
2. Մարկիոնականություն (Հին Կտակարանի (Տանահ) գրքերի Աստծո շնչով գրվելու բացասումն ու դրանց կարևորության նվազեցումը, ինչպես նաև կեղծ երկակիության (դուալիստական) ուսմունքը նրա մասին, որ իբրև երկու Աստված գոյություն ունի՝ Հին Կտակարանի չար և վրիժառու Աստվածը, և Նոր Կտակարանի բարի և հանդուրժողական Աստվածը):
3. Տարբեր տեսակի անկանոն տեքստերի Աստծո շնչով գրված լինելու ճանաչումը (հրեական և վաղեմի քրիստոնեական ապոկրիֆները, Թալմուդ, Միդրաշ, Եկեղեցու հայրերի տեքստերը և այլն):
4. Մեկ Աստծո՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու ժխտումը:
5. Հիսուս Քրիստոսի (Յեշուա հա Մաշիահ) Տեր Աստված լինելու ժխտումը:
6. Հիսուս Քրիստոսի (Յեշուա հա Մաշիահ) բանական էության ժխտումը:
7. Սուրբ Հոգու (Ռուահ հա Կոդեշ) Տեր Աստված լինելու ժխտումը:
8. Հիսուս Քրիստոսի (Յեշուա հա Մաշիահ) Գողգոթայի խաչին քավիչ մահի ժխտումը, ինչպես նաև Նրա մեռելներից փառավորված մարմնով հարության, երկինք համբարձվելու, գալիք տեսանելի վերադարձը երկնքից և երկրի վրա Իր Հազարամյա Թագավորության՝ Երուսաղեմ մայրաքաղաքով հաստատման ժխտումը (Եսայիա 2. 1-5, Երեմիա 23. 5-8, 33. 14-26, Միքիա 4. 1-8, Չաքարիա 8. 1-8, 12-14 գլուխը):
9. Մահից հետո կյանքի ժխտումը, Հիսուս Քրիստոսի (Յեշուա հա Մաշիահ) մեռելներից հարություն առնելու ուսմունքի, ինչպես նաև մեռելներից մարդկանց ապագա հարության ժխտումը (մեռելներից առաջին հարությունը դա «հարություն է կյանքի համար», և մեռելների երկրորդ հարությունը դա «հարություն է դատապարտության համար» (Յովհաննէս 5. 28-29, Ա Կորնթացիս 15. 51-52, Ա Թեսաղոնիկեցիս 4. 13-18, Յայտնություն 20. 11-15):
10. Մատանայի և դևերի (չար հոգիների) գոյության ժխտումը:
11. Կեղծ հոգևորականության, ոգեհարցության և կռապաշտության տարբեր ձևերը հուդայականության և քրիստոնեության մեջ, ինչպես օրինակ՝ Կաբալա, սրբերին աղոթքներն, աստղագիտություն, սայենթոլոգիա, Նոր Դարաշրջանի ուսմունքները (Նյու Էյջ), ռէյքի (ոչ ավանդական բժշկության տարատեսակ) և այլն:
12. Միայն Հիսուս Քրիստոսի (Յեշուա հա Մաշիահ) հանդեպ հավատքի և Աստծո շնորհով փրկության ժխտումը:
13. Հակաօրինություն (ուսմունք այն մասին, որ Աստված հավատացյալներից չի պահանջում հետևել Աստվածաշնչում թողած Աստծո կողմից հաստատած բարոյական օրենքներին):
14. Քրիստոնեական համակողմանիություն (ուսմունք այն մասին, որ բոլոր մարդիկ ի վերջո փրկվելու են):

15. Կրկնակի ուխտի աստվածաբանությունը (ուսմունք «Յեշուան ոչ հրեաների համար» նաև այն մասին, որ նրանք ունեն իրենց փրկության ճանապարհն առանց անձնական հավատքի դեպի Հիսուս Քրիստոսը [Յեշուա հա Մաշիահ]):
16. Փոխարինման մասին ուսմունք (ուսմունք այն մասին, որ Եկեղեցին փոխարինել է Իսրայելին, որ հրեաները կորցրել են Աստծո ընտրած ժողովրդի կարգավիճակը նաև երկրի վրա Քրիստոսի [Մաշիահ] Հազարամյա Թագավորության հաստատման ժամանակ Իսրայելի մասին մարգարեությունների բառացի կատարման ժխտումը):
17. Անտիսեմիտիզմը քրիստոնյա շրջաններում (թշնամական վերաբերմունքը և մեծարումը հրեաների հանդեպ):
18. Քրիստոնեական հավատքի ժխտումը հրեական արմատներից:
19. Հետևյալ փաստի ժխտումը՝ համաձայն աստվածաշնչյան մարգարեություններին ապագայում Ինքը՝ Տեր Աստվածն է հավաքելու հրեաներին Իսրայելի հողի վրա (Եսայիա 14. 1-2, 43. 5-7, 49.22, Երեմիա 16. 14-16, Եզեկիել 37. 1-14, 38. 8, Չաքարիա 12. 9-14):
20. Իր ժողովրդի հետ մեսիական հրեաների զուգորդման իրավունքի չճանաչումը, շարունակել ապրելն իմացած հրեական կյանքով, նշել Տերունական տոները համաձայն աստվածաշնչյան օրացույցի և բացահայտել դրանց մեսիական կիրառումը Հիսուս Քրիստոսի (Յեշուա հա Մաշիահ) կյանքում, ինչպես նաև մարգարեների կանխագուշակած ապագա իրադարձություններում (Չաքարիա 14. 16-19):

«Եւ սուտ մարգարէներ էլ կային այն ժողովրդի մէջ, ինչպէս ձեր մէջ էլ պիտի սուտ վարդապետներ լինեն. որ ներս կ'մտցնեն կորստական հերձուածողութիւններ. եւ ուրանալով այն Տիրոջը որ իրանց գնեց, իրանց վերայ շուտահաս կորուստ կ'բերեն» (Բ Պետրոս 2. 1):

III. Աստվածաշնչյան ուսմունքի հիման վրա հավատացյալների միջև աջակցել հոգևոր միաբանությանը հետևյալ միջոցներով՝

1. Սուրբ Գրքի ուսումնասիրումն ու դասավանդումը՝ հաշվի առնելով աստվածաշնչյան ժամանակների երբայերեն և հունարեն լեզուն ու մշակույթը:
2. Հրեական և քրիստոնեական ավանդույթների հարգանքի անեցումը, եթե դրանք հեթանոսական չեն և աստվածաշնչյան ուսմունքին չեն հակառակում (Մատթեոս 15. 6, Գործք Առաքելոց 15. 20-21, 29, Ա Կորնթացիս 10. 20-22, 31-33, 12. 1-2; Կողոսացիս 2. 16-17, Ա Թեսաղոնիկեցիս 1. 9, 5. 20-21, Յայտնութիւն 2. 14-15):
3. Մեսիական հրեաների և ավետարանական հավատացյալների միջև երկխոսության զարգացումը, առանց մեկը մյուսից բարձրացմանը (Ղուկաս 18. 14, Հռովմայեցիս 11. 17-22, Եփեսացիս 2. 11-22):
4. Եհովայի վկաների, մորմոնների – կեղծ քրիստոնեական պաշտամունքների (Առակաց 24. 11-12; Եփեսացիս 4. 14-16; Ա Յովհաննէսի 4. 1-4), ինչպես նաև այնպիսի շարժումների, ինչպիսին են «Հրեաները հրեականության կողմն են» (հակամեսիական կազմակերպություն), «Բնել Նոահ» (Նոյի որդիների շարժում) շարժումների ազդեցության տակ ընկած մարդկանց հոգևոր օգնությունը:
5. Հոգևոր միջոցառումների, Հրեաստանի և Եկեղեցու համար աղոթքների համատեղ անցկացումը, ինչպես նաև Հրեաստանում և այլ երկրներում հալածվող հավատացյալների օգնությունը (Մաղմոս 122. 6, Եսայիա 62. 1-7, Հռովմայեցիս 9. 1-3, 10. 1, 15. 27, Ա Տիմոթէոս 2. 1, 4. 16):
6. Ավետարանի տարածման մեթոդների մշակումն ինչպես Հրեաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում (Մատթեոս 28. 19-20, Հռովմայեցիս 1. 16, 10. 1):

«Եւ համբերութեան եւ միախարութեան Աստուածը տայ ձեզ միեւնոյն բանը խորիել իրար հետ Քրիստոս Յիսուսի կամքի համեմատ: Որ միաբան մէկ բերանով փառաւորէք Աստուծուն, եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը: Վասնորոյ իրար ընդունեցէք, ինչպէս Քրիստոս էլ մեզ ընդունեց Աստուծոյ փառքի համար» (Հռովմայեցիս 15. 5-7):